


16743



177

ԼԵՒԱՆ ՍԱԿՐԵԱՆ

ՀԵՐՈՍԸ

2003.

Թոստով - Դօն  
Տպ. „Աշխատանք“

1918.



ՀԵԽՈՆ ՍԱՀԻՐԵԱՆ

891-99

Ա-23

ՀԵՐՈՍ

Ռուսով—Դօն  
Տպագործութեանը  
Տպագործութեանը

1918.

47201-ս



32486. ե

Երբ հերոսը ծնւեց, ժամանակը եկաւ և  
հարցը նրա ծնողներից:

— Ի՞նչ պիտի անի ձեր զաւակը, երբոր  
մեծանայ:

— Մեր սրտի իղձը պիտի կատարի, որով-  
հետեւ մենք բախտ չունեցանք կատարելու նրան:

— Իսկ եթէ չկատարեց:

— Չէ՛, պէտք է կատարի, պատասխանեցին  
ծնողները. եթէ նա մեր զաւակն է, ապա ուրե-  
մըն մենք գիտենք ինչ է լինելու նա:

Ժամանակը զարմացաւ նրանց վսահու-  
թեան վրայ եւ ասաց.

— Քանի որ դուք այդպէս հաւատարիմ եք  
մասցել ձեր իղձին, ես էլ ուզում եմ օգնել ձեր  
զաւակին. նա կապրի այնքան տարի, մինչև որ  
ձեր սրտի իղձը կատարի:



I

Ուր ես թռչում, միաք իմ, որ հեռուներն  
են կանչում քեզ, գեղի որ աշխաբհն ես ուղղում  
թռիչքդ...

Հանգստացիր, սպասիր բախտաւոր ժամա-  
նակներիւ Թող խաղաղութեան մէջ թեերդ հզօ-  
րանան, և երբ դու գալիք օրերում աշխարհներ  
անցնելու լինես, խոչընդուները յաղթահարել  
կարողանաս, դժւարութիւնների առաջ ծառանաս  
և նրանց վրայից քեզ կանչող հեռուներին հաս-  
նես:

Բայց լոյն ես դու իմ խորհուրդը: Ոչ, դու  
անկարող ես: Քո հանգստութիւնը բոլէական է.  
այն էլ տեղի է ունենում այն ժամանակ, երբ  
դու լսում ես իմ յուսահատական կանչը գարձի:  
Երբ լսույ է իմ ձայնը, դու գարձեալ թեաւոր-  
ւում ես, կարձես ինչ որ բան ունես դտնելու,  
ժամանակ չպիտի կորցնես:

Դու հսկայ թռչուն ես, աշխարհն էլ քո գա-  
ռագիզն է, ելք չկայ նրանից: Եւ դու չես գըտ-  
նում նրա մէջ մի տեղ, ուր իջնես ու հանգստա-  
նաս: Արիւնի հոտը քեզ չի բաշում, գիտկները  
քեզ վայր չեն բերում: Դու անդդ չես, թէն  
թռչուն ես հսկոյ, բայց զիշատիչների երկրից չես:

Քո փնտրածն ուրիշ է, բայց դու չես գըտ-

նում այն։ Իսկ ինչ որ գտնում ես հեռաւոր ու բոնումներիդ ժամանակ՝ պատմում ես ինձ և իմ հոգին լցնում ես մի ցաւով, որից բարձրանում է խելայեղութեան փոթորիկը և սկիզբ է առնում արցունքի հեղեղը։

Քո պատմութիւնը միայն ես պիտի իմանամ, թէ ուրիշներին էլ պէտք է պատմեմ։ Թայց նա մահու և լոռութեան համար չէ։ Նրան ծնել է ամբողջ աշխարհը և աշխարհի հսկայ ծնունդը չի կարող պարփակւել մի մարդու մէջ։ Նրա մայրն է ամբողջ աշխարհը, և ես աշխարհին պիտի վերադարձնեմ իր զաւակին։

## II

Երկրի ցամաքները ալեկոծութեան մէջ են և ծովերն ու ովկիանոսները խաղաղւել են, որ ունկնդրեն ցամաքի անսովոր ալեկոծութեան։ Թայց նրա փոթորիկի պատճառը հրաբուխներն ու երկրաժարները չեն։ Հանդիսատ են նաև ստորերշկեայ ուժերը։ Նրանց արձագանքն է հզօրագին շարժման մէջ դրել մարդկային ցեղը։ Մարդկային ցեղը, որի մէջ արձագանք են տւել բոլոր ստորերկեայ բախումների ու տատանումների ձայները և բոլոր փոթորիկների գոչումները, ինըն էլ դարձել է այդ բոլոր ուժերի թնդիւններից մի հրաբուխ և այժմ ժայթքել է ու այրում է իր սեփական կրակով։

Զէ որ նա բնութեան հարազատ ծնունդն է, ինչու ուրեմն չպիտի նմանի նրան, ինչու ծովերը միայն պիտի ալեկոծւեն և երկրի սրտի

արիւնը միայն պիտի փոթորկի։ Ինչու նա էլ, որին երկրի տափարակները այնքան ազատութիւն են տալիս, չպիտի արձագանքի իրեն հարազատ տարերքների ահաւոր ձայներին։ Ինչու նա էլ չպիտի գոչի, ինչու նրա ձայնն էլ չպիտի որոտայ բարձութիւններից անդունդները։ Եւ գոչում է նրա ձայնը՝ ահաւոր ու մահաբեր։ Նա ինքն ընդգույն է իր գէմ և խորտակում է իր ձեռքով կանգնեցրածը...

Եւ հզօրագոյն բախումների գաշտերից, ուր ծուխը, արիւնն ու մոխիրը իրար են խառնւել, փախչում է իմ ահաբեկւած միտքը գէպի ինձ հարազատ բարձրավանդակը և նրա ձորերի մէջ ու բարձրութիւնների վրայ՝ ընկերացած անհանգիստ քամու հետ՝ կատարում է իր յուսահատական պտոյտը...

Կանգնիր, միտք իմ անհամբեր, իմ հոգին էլ է ուզում ըեղ հետ գալ, իմ հոգին էլ է ուզում այդ լեռներին այցելութեան գնալը թող քամուն, նա շատ արագ է թուչում։ Իմ հոգուն ժամանակ է հարկաւոր ողբալու բարձրավանդակի հսկայ զիշտը։ Թէև նրա հեկեկանքից կը մըթնի քո լոյսը, բայց և այնպէս նա պիտի գայ։ Այնտեղ, ուր տառապանքն է հեկեկում, գու չպիտի մենակ գնաս, ըեղ պէտք է ընկերակցի նաև իմ հոգին։

Եւ հոգիս սև հագած՝ միացաւ մտքիս հետ կատարելու մի տխուր ճամբորգութիւն...

Ահա իմ սիրելի բարձրավանդակը։ Խաւարը

ծածկել է նրան։ Ես պիտի սպասեմ ու տան-  
չեմ այս գագաթի վայ, մինչև որ լոյսը բացւի։

Գուցէ այդպէս էլ հարկաւոր է։ Գուցէ այս  
բարձրավանդակին աւելի լաւ է գիշերով այ-  
ցի գալ և խաւարի մէջ պատրաստել նրա ապ-  
րած զարհուրանքին դիմանալու։ Խաւարը պիտի  
սովորեցնի ինձ փորը ինչ խաղաղ հոգով նայել  
նրա ողբալի վիճակին։ Բայց ես չեմ ուզում ըն-  
դունել այդ թեթեւութիւնը։ Բարձրավանդակի  
սոսկումը ժող ինձ էլ խորառակի, թող ինձ էլ  
անհետացնի և իր վրայի իջած խաւարը թող ինձ  
ոյժ չտայ, թող ինձ կուլ տայ…

Բայց այդ ինչ եմ լսում… Քամին բերեց  
ինձ լերան ստորոտից ցասկոտ մի գոչ և նրան  
հետեւող մի հառաջանք…

Մութ է դեռ և ես չեմ կարող իմանալ  
ում կրծքից արձակւեց այս հառաջանքի ձայնը։  
Անշուշտ մի վիրաւոր է նա, հրաշքով տղատւած  
գահիների ձեռքից, տանջւում է իր վէրբերի  
ցաւից։ Այս խաւարի մէջ տառապել վէրբերի  
ցաւից, գիտակներով ծածկւած այս երկում, անօգ-  
նական, առանց յօյսի՝ սոսկալի դրութիւն է։  
Ինչո՞ւ նա էլ չի արժանացել միւսների բախտին՝  
չի մեռել և վիրաւոր ընկած կամ թափառում է  
այս ամոյութեան մէջ։ Միթէ այս բարձրավան-  
դակի վրայ յաւերժ պիտի լուի տառապանքի  
ձայնը։ Միթէ դեռ չի լրացել դառնութեան ժա-  
մը և ահա նրան լրացնում է այս միակ վիրա-  
ւորը։ Եւ նա չունի մի ընկեր, որ նրա տան-  
ջանքի ձայնը լուէր և նրա ցաւը մեղմացնէր։  
Ճակատագերը պատժել է նրան՝ թողնելով մե-

նակ վիրաւոր եւ խաւարի մէջ կորցնելով նրա  
հառաջանքը…

Բայց ինչ եմ ասում ես Զէ որ նա մենակ  
չէ, չէ որ ես լսում եմ նրան։ Լսում եմ, բայց  
նա այդ չգիտէ։ Այս, եթէ իմանար։ Վերկենամ  
և կանչեմ բոլոր ոյժով։

— Իմ եղբայր, ես լսում եմ քո ձայնը։  
Նուտով կը լուսանայ, ես վայր կիջնեմ և  
քո վերբերը կը կապեմ։

Միայն թէ ես նրան կենդանի գտնեմ, մի-  
այն թէ նրան մինչև առաւօտ բորենիները չպա-  
տառութենան։

Ո՞հ մեծ խաւար, դու գոնէ մեղմացրու  
գժբախտ տառապեալի ցաւը։ այս գիշեր դու  
կարճացրու տեսողութիւնդ։

Սակայն մութն իմ աչքերին գարձաւ աւելի  
անթափանց ու աւելի ճնշող։ Եւ վիշտը աւելի  
լայն բացեց իր թերերը, որ չինի թէ հոգիս իր  
որև է անկիւնից յոյսի շունչ ստանայ։

Ո՞հ մեծ խաւար, դու թէկ ծածկում ես  
եղեռնը ցերեկւայ, բայց բերում ես հետդ վիշտ  
ահագին, քամում ես արցունը իմ աչքերից և ո-  
սոգում ես նրանով այս բարձրութիւնը, ուր դեռ  
յանցնքի գարշապարը չի կոխուել։ Միթէ այս  
բարձրավանդակի վրայ չպիտի մնայ մի տեղ,  
ուր չնշած չինի վիշտը և թափւած չինի ար-  
տասուրը…

Ո՞հ մեծ խաւար, դու որ ծածկում ես  
մարդկանց գժբախտութիւնը, բաց արա այս  
անդամ մի փոքր վաղ նրանց տառապանքի պատ-  
կերը։ Թող ես ժամ առաջ տեսնեմ նրան, թող

ժամ առաջ պոռթքի հեծկլտանքն իմ հոգու։

Ո՞հ մեծ խաւար, դու որ խնամքով պարու-  
րում ես երկիրը ու հանդստացնում ես կրթերը,  
դութ չունես ոչ դէպի վիրաւոր տառապողը, ոչ  
էլ դէպի առողջը։ Դու դարձար էլ առաւել ան-  
թափանց։

Կրկին անդամ հասաւ ինձ գոչը ցասկոտ և  
հառաջանքը նրան հետևող։

Գիշերը քեզ էլ է տանջում, իմ եղբայր,  
ինձ էլ Բայց համբերիր մի փոքր էլ, թող ու-  
ժերդ չսպառւեն։ Շուտով կը լուսանայ և ես կը  
տեսնեմ քեզ իմ դժբախտութեան գաղաթից և  
դուցէ դու էլ ինձ ըո տառապանքի ստորոտից...

Մենակութեան ու խաւարի մէջ շխեղդւելու  
համար՝ միտքս սաւառնեց դէպի բարձրավանդա-  
կի անցեալը—դէպի դարերի խորքերը...

Այս մթութիւնից ձգում ես քեզ դէպի ու-  
րիշ մթութիւններ։ Նայիր չկորչես նրանց ան-  
յայտութեան մէջ։

Այդ անյայտութեան մէջ կորել են հարիւ-  
րաւոր սերունդներ, որոնցից շատերը իրենց բնա-  
կան մահով, իսկ ուրիշները բռնի մահով։ Այս  
բարձրավանդակի վրայ տասնեակ սերունդներ  
իրենց վախճանն են գտել, երբ նրանց արիւնն  
ու ոգին մերձեցրել են նրանց ըմբոստութեան  
վարկեանին։ Նրանք ծառացել են բռնակալների  
դէմ և իրենց արիւնով ոռոգել են այս բարձրա-  
վանդակը։ Նրանց արիւնը ծծել է հողը. ապա  
անցնելով ցորենի ու հաճարի մէջ՝ կրկին անդամ  
դարձել է արիւն և ընկածների հզօր շունչը վե-  
րակենդանացրել է դալիք սերունդների մէջ։

Սրանց սրբազան մտածմունքն էլ եղել է՝ չդնալ  
ուրիշների ճանապարհով և չխօսել նրանց բար-  
բառով։ Եւ իր հարազատ բարբառի սիրոյն պա-  
տերազմել է բարձրավանդակի ժողովութեղ իր  
թշնամիների հետ, զարկել է ու զարկւել և ինչ-  
պէս այսօր՝ դիակներով ծածկել է հարթութիւն-  
ներից բարձրացած իր սիրելի երկիրը։

Բայց ինչպէս սահատակւել է այդ ժողո-  
վուրդը իր բարբառի սիրոյն, ինչպիսի սոսկալի  
զոհաբերութիւններ է արել նաև ինչու նա էլ չի  
հետևել ուրիշների օրինակին և չի հրաժարւել  
իր բարբառից...

Այդ բարբառի մէջ հնչել է նրա գոյութեան  
իմաստը, նրա հոգու վսեմութիւնը։ Դարեր շա-  
րունակ նա արիւն է թափել, դիակներով ծած-  
կել է երկիրը, որպէսզի հեռու պահի իր բար-  
բառը արեան ու դիակների հոտից, բռնութիւն-  
ների ու տառապանքների մզձաւանջից, որպէսզի  
նրա ձայնի քաղցրութեան ունկնդրի և նրա ելե-  
ւէջների ամենաբարձր հնչիւնը լսի։ Գեղեցկու-  
թեան բարբառը նա ուզեցել է լսել, բայց ոչ  
աւերակների մէջ և հեռու բռնութիւնների մըզ-  
ձաւանջից։ Այս սրբազան ձգտումի համար նրա  
հոգին դարերի ընթացքում արտասուել է կարօ-  
տով։ Նրա հոգին լաց է եղել, իսկ մարմինը ա-  
րիւնոտւել է և նրա հոգու վսեմութեան բար-  
բառը փոխւել է զայրոյթի, անէծքի ու ատելու-  
թեան։ Ցասկոտ ձայնով գոչել է նա իր թշնամի-  
ների վրայ և իր սուրբ խրել է նրանց բիրդ ոըր-  
տերը։ Թշնամի ու հարազատ արիւնը թափւել է  
բարձրավանդակի վրայ, նրան ծծել է հողը. ապա

անցնելով ցորենի ու հաճարի մէջ՝ դարձել է վերստին հակամարտ մի արիւն և նորոգել է դարձեալ ցածութեան ու ազնւութեան մարտը։ Փողովուրդը կռւել է թէ՛ իր դէմ և թէ թշնամիների դէմ և յաղթելով երկուսին էլ՝ փռել է դիակները հայրենի բարձրավանդակի վրայ։

Ո՞հ դու մեծ կարօտեալ, որ նահատակւել ես վսեմ ձգտումիդ սիրոյն, չկարողացար յաւերժ ժամանակների համար հնչեցնել քո յօրինած ներդաշնակութիւնը, քո հոգու աննման բարբառը...»

Եւ միտքս ու հոգիս, որպէս երկու ահաբեկւած թռչուններ, ցուրտ ու խաւար գագաթի վրայ գգւեցին իրար և ընկղմւեցին նիրւանայի մէջ...»

### III

Խաւարը սկսեց նօսրանալ։ Յուտով արևելքը կը լուսազարդւի արեգակով և նրա ջերմութիւնը կը թափի նաև այս դժբախտ բարձրավանդակի վրայ։

Կրկին անդամ հասաւ ինձ գոչը ցասկոտ և հառաջանքը նրան հետեւող։

— Իմ տառապող եղբայր, լարիր ուժերդ, խաւարը նօսրանում է, շուտով կը լուսանայ։ Մութը բաժանել է մեզ, լոյսը կը միացնի։ Յանուն այդ մերձեցման՝ դու ազատւած եղիլ խաւարում շրջող չարիքից։ Քո ցասումն ու հառաջանքը հասնում են ինձ և իմ հոգու մէջ առաջացնում են զայրոյթ ու տանջանք։

Ահա և լոյսը...

Լերան ստորոտում տեղաւորւել է փոքրիկ քաղաքը, նրանից այն կողմ տարածւել է ընդարձակ դաշտը, ծածկւած քաղմաթիւ գիւղերով, այստեղ այնտեղ ընկած են դիակներ. Լերան ստորին լանջի վրայ—ճկ զարմանք—կանգնել է մի տղամարդ, մերկացրած սուրը ձեռին, բազուկները յաղթ, ճակատը բարձր՝ նայում է իր առջև—դժւար վերելքին...

Մոռացած ամեն ինչ. և տանջանքը գիշերւայ, և տեսարանը սոսկալի՝ յառել եմ հայեացը նրան և չեմ հաւատում աշքերիս։ Նրա վըճռականութիւնը, նրա յաղթ բազուկները, նրա բարձր ճակատը զմայլեցրին ինձ։

— Եթէ ես հազար ու մի գիշեր էլ տանջւէի այս գագաթի վրայ, դարձեալ բախտաւոր պիտի համարէի ինձ, տեսնելով այս տղամարդուն, ասացի ես զապւած ձախով։

Ահա նա սրախոխող արեց լեռնից վայր իջնող մի բորենու։ Քայլեց մի փոքր, ապա յարմար տեղ գտնելով՝ մի քանի քայլ վեր բարձրացաւ։ Ահա նա սրախոխող արեց նաև մի չախկալ, երբ այս վերջինը դուրս էր գալիս իր որջից։ Նա կանգ առաւ, յենւեց մի ժայռի, կարծես աւելի շուտ իր անցնելիք ճանապարհը որոշելու համար, քան հանգստանալու։ Կրկին քայլեց, անցաւ բաւականին ճանապարհ։ Ահա նա սրախոխող արեց էլի մի չախկալ։ Հասաւ մի ուրիշ ժայռի, կանգ առաւ, ապա յենւեց նրան, նորից սկսեց բարձրանալ...»

— Ուրեմն նա միտք ունի այս գագաթը

բարձրանալու և նախ քան այստեղ հասնելը պիտի  
սրախսիող անի քարենիներին ու շախկալներին,  
ասացի ես և շարունակեցի լարւած ուշադրու-  
թեամբ հետեւել նրան:

Արեգակը բարձրացաւ հօրիզոնից և խա-  
ւարից հետք անգամ չմնաց երկրի վրայց կուսա-  
ւորւեց նաև իմ միտքը և կասկածի հետք իսկ  
չմնաց նրա մէջ...

Այս հերոսը, որ բայլում է լերան լանջերով,  
այլես առեղծւած չէ ինձ համար: Նա մի պա-  
տահական մարդ չէ, նա այս բարձրավանդակի  
հարազատ զաւակն է: Թոյլերը ընկել են, իսկ  
նա, իբրև բոլորից զօրեղը, մնացել է: Նա մի  
իղձ ունի իր սրտում և ուզում է նրան արտա-  
յայտել այս լերան բարձունքից:

— Այս գագաթը քեզ է սպասում, ով ան-  
ընկնելի մարդ: Դու, որ յաղթել ես թշնամինե-  
րիդ, չես կարող չհասնել այստեղ: Այս բարձուն-  
քից երեսում են վայրերը կեռու, ծովերը կա-  
պոյտ...

Բոլորը ընկել են, մնացել է այս մէկը: Բայց  
նա այնպիսի տպաւորութիւն է թողնում, կար-  
ծես ամբողջ ցեղի հոգին ու սիրաը իր մէջ ունի,  
Այս գիտակցութիւնը նրան ոյժ է ներշնչում և  
ոչ մի արդելք չի կարող կանգնեցնել նրան վե-  
րելը ճանապարհին: Որպէս մի ձգողական զօրու-  
թիւն ձգում է նրան այս գագաթը դէպի իրեն  
և նա բարձրանում է դանդաղ, բայց հաստատ  
բայլերով:

— Բարձրացիր, ով հերոս, ըստ յաղթ բա-  
զուկներին մեռնեմ: Ես կարօտ եմ ըստ հոգու

վսկեմ բարբառը լսելու և քա խիզախ դէմքը մօ-  
տիկից տեսնելու: Իմ փափագը պիտի բացւի  
որպէս մի ծազիկ, թէ պիտի թօշնի իմ սրտում  
չբացւած: Այդ անհնարին է. դու պիտի հասնես  
այս կէտին և ես պիտի լսեմ քեզ: Բայց ես չնմ  
կարող ըստ ճանապարհը ծաղիկներով ծածկել:  
Ներքել դիակներ, վերել ծաղիկներ՝ այսպէս է  
հերոսների ճակատագիրը: Սակայն դեռ ցուրտ է,  
ծաղիկները դեռ չեն ծաղկել: Բայց եթէ իսկա-  
կան ծաղիկները դեռ չեն ծաղկել, ահա փռում  
եմ ես ըստ առաջ իմ հոգու ծաղիկները: Թող նը-  
րանը էլ կանչեն քեզ, թող նրանը էլ ոյժ տան  
քեզ, թող նրանը էլ ասեն քեզ, որ ամայութեան  
մէջ չի հնչելու ըստ աննման բարբառը: Ծաղիկնե-  
րի բուրմունքի հետ կը տարւի նա դէպի վայշ  
քերը հեռու և ծովերը կապոյտ...

Մեր ցեղը գարերի ընթացքում դեռ չի տե-  
սել իր ոչ մի զաւակին այս բարձրունքին հասած:  
Նա միշտ էլ այս բարձրութեան համար է երա-  
գել, բայց միշտ էլ կոտրւած թևերով գերեզման  
է իշել: Եւ դու այժմ մեր ցեղի գարաւոր իղձը  
հոգուց մէջ գրկած՝ դիմում ես դէպի այս բար-  
ձրունքը: Թոյլ տուր, ով հերոս, բոլոր ընկած սե-  
րունդների կողմից խոնարհւել ու հայրուրել  
այս հողը, որի վրայ շուտով դու պիտի կանգ-  
նես, թոյլ տուր սիրոյ և կարօտի արցունքով  
թընել նրան...

Նա գագաթը բարձրանալ և շարունակեց  
ճանապարհը լերան լանջերով:

Նա մենակ չի մնալու: Նրա մասին կիմա-  
նան իր ցրիւ եկած եղբայրներն ու բոյլերը,

Նրանք կը գան և այս բարձրավանդակի վրայ բախտաւոր կը լինեն։ Եւ նրանց բախտաւորութեան միջից կը լուի իրենց հերոսի բարբառը։

Բայց ինչ է լինելու արդեօք այդ բարբառի իմաստը։ Իմանալ անհնարին է։ Այդ ծածկւած է գալիք օրերի մշուշով։ Այդ մի գաղտնիք է, որ մի օր արևի պէս կը ծագի...

Ահա նա սրախոխող արեց էլի մի բորենու և առանց ժամանակ կորցնելու շարունակեց առաջ գնալ։ Նա ուզում է մաքրել լեռը այդ գաղաներից։

— Ես հասկանում եմ քեզ. դու պիտի անցնես լեռան չորս բոլորը և սրախոխող անես բորենիներին, որովհետեւ քո բարբառը չի կարող հնչել, քանի դեռ լսում է նրանց ձայնը։ Ուրեմն թող քո սրից կաթի արիւնը, քանի դեռ չի հասել քո կեանրի գերագոյն վարկեանը։ Զարկ, ով հերոս, և լոեցրու կաղկանձը գայլերի։ Զարկ, որ մերձեցնես կարելիութիւնը որբազան և իղձը՝ արիւնով ու արցունքով ծածկւած՝ գարձնես իրական։

Նա անհետացաւ ահագին ժայռի հետեւ և նրա գերութիւնից ազատւած հայեացքս ընկաւ աւերակների վրայ, շիրիմների ու չծածկւած դիակների վրայ։

Սոսկալի տեսարանից աչքերս մթնդեցին և մտքերս մոայլեցին։ Սակայն երկար չտեսեց իմ տեսողութեան ու զգացողութեան մթագնումը։ Եւ ինչպէս խաւարում թափառողը չի յուսահատւում և ապա մտաբերելով մայր մտած արեգակը չի յուսադրում, այնպէս էլ ես սփոփեցի ինձ,

երբ վերստին մտածել սկսեցի ժայռի հետեւում գտնւող քաջի մասին։

Դու մեծ կարօտեալ, որ նահատակւել ես հայրենի բարձրավանդակիդ վրայ, իզուր չես ծնել այդ հերոսին. նա պիտի ապրի և քո հոգու շունչը աշխարհին հազորդի։ Քո ապրումները գեղեցիկ ու մտածումները վսեմ նա պիտի յանձնի յաւերժութիւնը կը պահի որպէս հարազատ մայր։

Չինք թէ քո մահւան լուսթեան մէջ, ուր ոչինչ մուտք չի գործում, մտնի սոսկալի կասկածը և թունաւորի քո խաղաղութիւնը։ Դու, որ արևի տակ այնպիսի հաւատով լսել ես նրան, դոնէ հողի տակ փակիր լսելիքդ նրա շշնջոցների դէմ։ Հաւատան ինձ, քո հերոսը պիտի յաղթահարի բոլոր արդելքներին։ Այս գագաթի վրայ թառած իմ հոգին իր ամենատես աչքերով կարդում է նրա ճակատագիրը և մոռացած պահ մի քո անպատմելի մահացումը՝ ուրախանում է քո զաւակի բախտի վրայ։ Նա փոել է քո հերոսի առաջ իր ծաղիկները, որ նրա ուզին մերկ ու ամայի չլինի։ Այդ ծաղիկների վրայ հանգստանում է նրա յոգնած գլուխը և մեղմանում է նրա աչքին պայցըարի դաժանութիւնը։ Իմ հոգին այս բարձրութեան վրայ կը կորչէր ու կանէանար, եթէ չլինէր այդ յոյսը։ Այդ յոյսը նրան ոյժ է տալիս տանելու քո մահը և տեսնելու քո ոդու յաղթանակը։ Քո հերոսի բերնից պիտի հնչի քո բարբառը հզօր՝ ազատւած գիշատիչների շնչից։ Եւ քանի դեռ չի հնչել քո ձայնը իր ամբողջ ինքնութեամբ ու կատարելութեամբ, քո հերոսը

պիտի ապրի ու պայքարի...

Ահա երևաց նա իր ամբողջ հասակով լեռան  
հրասիսային լանջի վրայ։ Նոյն վճռականութիւնը,  
նոյն բայլւածքը։

— Քայլիր, ով հերոս, քայլիր։ Դու բախտն  
ես մեր ցեղի, դու յոյսն ես մեր ցեղի, դու մար-  
մացումդ մեր ապրումների, դու արևդ երկ-  
րային մեր գալիք օրերի։ Դու ես իմաստը մեր  
տեղերումների և պատճառը մեր կեանքի յարա-  
ակութեան։ Քո յայտնւելուն մենք սպասել ենք  
երկար գարեր և ահա դու յայտնեցիր։ Փառք  
քեզ ուղարկող զօրութեան։ Այդ զօրութեան սիրոյն  
մենք արիւն ենք թափել, արցունք ենք թա-  
փել։ Եւ ահա դու ելած արիւնի ու արցունքի  
միջից՝ սպեղանի ես գնում մեր վէրքերի վրայ և  
ցամաքեցնում ես մեր աչքերը։ Եւ մենք մեր հո-  
գու գորովը ու սրտի գուրգուրաննքը քեզ համար  
ենք պահել։ Ընդունիր այդ բոլորը և բարձրա-  
ցիր վեր...



Ոստով—Գօն.

Մարտ 1918 թ.

16743

75к.

4.8-1

Бук. № 900  
н.ц. № 75

Գիւն է 75 ԿՈՊ.

Պահեստը՝ տպ. „Աշխատանք“. Ռոստովъ н-Д.,  
Казанск. ул. № 64.

22 Ազգային գրադարան



NL1641421

